

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԷՍ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ**

Հայ ժողովուրդը դարեր շարունակ, անկախ ժամանակներից ու տրամադրությունից, բանարուեստի անգին գոհարներ է ստեղծել ու սնուել ի՛ր իսկ ստեղծածով: Այդ սնունդներից մեկն էլ եղել է ժողովրդական երգիծական մանրապատում-գուարճախօսությունը: Ինչքան էլ ծանր ու դաժան է եղել կեանքը, այն իր կենսափիլիսոփայությամբ, սեղմ խօսքով շատ բան ասելու կարողությամբ ու դրական լիցքերով օգնել է մարդուն՝ ծիծաղի պրիսմակով նայել անգամ ստեղծուած ամենաողբերգական իրավիճակներին, հնարաւորինս ձերբազատուել հոգեկան ցնցումներից, վերականգնել կենսագործունէութիւնն ու տրամադրուել նորանոր արարումների:

Հայոց Մեծ Եղեռնը իր անդրադարձն է գտել հայ ժողովրդական վիպական եւ քնարական բանահիւսութեան մի շարք տեսակներում (աւանդագրոյց, ժողովրդական յուշապատում, առած-ասացուածք, անէծք, տեղահանութեան, կոտորածի, օրօրոցային, լալեաց կամ սգոյ երգեր եւն.): Իսկ բանաւոր ստեղծագործութեան այնպիսի տեսակ, ինչպիսին երգիծական մանրապատում-գուարճախօսութիւնն է, ինչպէ՛ս էր արտացոլելու ցեղասպանութեան թեման...:

2014ին, իբրեւ Հայոց Ցեղասպանութեան փաստացի ապացոյցներ, փորձեցինք տպագիր զանազան պատմաագագրական ժողովածուներից, յուշագրութիւններից եւ անէկդոտների գրքերից, ինչպէս նաեւ մեր անձնական գրառումներից ի մի բերել Ցեղասպանութեանն առնչուող գուարճապատում-գուարճախօսական բնոյթի նիւթեր եւ բանագիտական մօտեցումներին զուգահեռ՝ ներկայացնել նաեւ դրանց փաստավաւերագրական արժէքը:

Մեծ Եղեռնը վերապրածների մէջ եղան մարդիկ, որոնք տարիներ անց կարողացան իրենց մէջ ուժ գտնել՝ այդ օրերին ու

դրա հետեւանքներին առնչուող տարատեսակ յուշերը գրառելու, գալիք սերունդներին ի պահ տալու թուրքի ու նրա աջակիցների կողմից իրագործուած վայրագութիւնները՝ որպէս աշխարհի քաղաքակիրթ մարդկութեան երեսին դաջուած ամօթանքի խարան, որպէս մարդկութեանն ուղղուած սթափութեան կոչ ...:

Տաւր մի փոքր մեղմուելուց յետոյ յուշագրութիւններին զուգահեռ՝ պատառ-պատառ հաւաքում, գրի են առնում նաեւ Յեղասպանութեանն առնչուող զուարճապատում-զուարճախօսութիւններ: Վերքերը բուժել սկսող փրկուածների բեկորներն ու նրանց ժառանգները փորձում էին երգիծանքի կաղապարի մէջ տեղաւորել ոչ թէ բուն եղեռնի օրերի, այլ դրանց յաջորդած ժամանակների զաւեշտալի պատմութիւնները:

Խորհրդային Հայաստանում եւ Սփիւռքում (Միրիա, Լիբանան, Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ, Թուրքիա՝ Ստամբուլ) Մեծ Եղեռնը վերապրածներից գրառած բանաւոր վկայութիւնները՝ յուշերը, գրոյցները եւ պատմական բնոյթի երգերը վաստակաշատ բանահաւաք-բանագետ Վերժինէ Սվազլեանը ի մի բերեց իր *Հայոց Յեղասպանութիւն. Ականատես Վերապրողների Վկայութիւններ*² ստուարածաւալ աշխատութեան մէջ: Իսկ երբեմնի հայաշունչ բնակավայրերի (Մուսա Լեռ, Կիլիկիա, Պոլիս) բանաւոր մշակութային արժէքները նա կարողացաւ իր վերապրող ժողովրդին վերադարձնել առանձին ժողովածուներով³:

Աշխարհով մէկ ցրուած սփիւռքահայութեան համար նմանատիպ նիւթերի հրատարակումով, հեղինակները ամէն կերպ ձգտում էին յօշոտուած հայրենիքի իրենց անկիւնը վերակենդանացնել, տալ հայրենի բնօրրանում ապրած հայութեան կեանքը, Յեղասպանութեան հետեւանքով աշխարհով մէկ ցրուած նրանց բեկորների յիշողութիւններն ու զուարճալի պատմութիւնները⁴:

Այլ էր պատկերը Խորհրդային Հայաստանում: Մինչեւ 1950-60ականները Յեղասպանութեան եւ պահանջատիրութեան թեմայով խօսելն անգամ արգելուած էր, ուր մնաց թէ յուշապատումներ եւ անեկդոտներ հրատարակելը: Միայն Ստալինի մահից յետոյ սկզբում վախով ու ցածրաձայն, այնուհետեւ՝ Խ. Հայաստանում եւս սկսեցին բարձրաձայն պատմել, որոշ ժամանակ անց նաեւ հաւաքել ու տպագրել թէ՛ Մեծ

Եղեռնի յուշագրութիւնները, թե՛ քաղաքական ու Ցեղասպանութեան թեմաներով երգիծապատում-գուարճախօսութիւնները:

Ցեղասպանութեան թեմային առնչուող երգիծապատումները մինչեւ 1960ականները գերազանցապէս ծաւալուն սիւժետային կառուցուածք ունեն, ժողովրդական յուշապատում-գրոյցների տեսքով են հանդէս գալիս, հերոսները եղեռնի կնիքը կրող որոշակի դէմքեր են, իսկ անսպասելի ծիծաղ յարուցող վերջաբանային աւարտն էլ յուշում է նրանց տեսակային յատկանիշը:

Այսպէս, Սարգիս Բախտիկեանը (Ներսէս Եպս.) «Բերան Դրուելիք Է» գուարճապատումում հակիրճ ներկայացնելով 1895ին ջարդերին յաջորդ տարում շեփիկցիների կենսունակութեան եւ գոյութեան պայքարի նկարագիրը, ներկայացնում է աւերակ եկեղեցու մնացորդները օրհնելու նպատակով քաղաքից քահանայ հրաւիրելու, «*զայն վերակառուցանելու մասին մտածելու եւ ժողովուրդին Սրբութիւն, Հաղորդութիւն տալու*» հետ կապուած պատմութիւնը եւ Շեփկայ Խելացիի հետ տեղի ունեցած գուարճալի երկխօսութիւնը:

Բոլորը հաւաքուել են, բացի Խելացիից, որ «...անդին, հեռուն գլուխը կախ կ'աշխատէր առանձին:

- Աղբար Խելացի, աղբա՛ր...

- ...

- Աղբա՛ր, աղբա՛ր...

- Ծօ տնաւեր, ի՞նչ կայ, ի՞նչ...

...

- Ծօ, էկու՛ր, էկու՛ր, ծօ Տէր Պապը քաղքէն էկեր է, ծօ սրբութիւն կուտաւա, սրբութիւն...

- Իմ փայլս փենճիրէն թող դնէ, փենճիրէ՛ն...

Ծօ, աս փենճիրէ դրուելիք չէ, բերան դրուելիք է, բերան, բերա՛ն...»⁵:

Իսկ «Տղա՛ս, անիկա ես ալ կ'առնեմ»⁶ գուարճապատումում կոտորածներից հրաշքով փրկուած մի ընտանիքի բաժին հասած ճակատագրի հակիրճ, բայց միաժամանակ խօսուն նկարագրութեամբ ներկայացում է փախեփախի ժամանակ կորած եւ նորից յայտնուած կնոջ ու դեզերումներից յետոյ մէկ ուրիշի հետ

եկեղեցով պսակուած ամուսնու անելանելի վիճակը եւ դրանից դուրս գալու "ելքի" առաջադրումը.

«Տարագրութեան սեւ օրերէն վերջ պատահած ողբերգութեան մը մանրանկարը մարաշցի Տ. Յակոբի պարզամիտ արտայայտութեամբը երգիծանքի նիւթ կը դառնայ:

Ա. Համաշխարհային Պատերազմէն առաջ ամուսնացած զոյգի մը ամուսինը, ազատուելով սպանդէն՝ Ջինադադարէն ետք՝ նախ Կիլիկիա եւ ապա Պէրթուր կ'իյնայ: Իր կինը բաւական մը փնտռելէ եւ սպասելէ վերջ՝ չի կրնար գտնել զայն եւ յուսահատ կը յաջողի ամուսնանալ ուրիշ հայուհիի մը հետ:

Իր ամուսնանալէն յետոյ՝ չար բաղդէն ըսենք, նախկին կինն ալ գտնուելով կու գայ կը հասնի իր ամուսնին մօտ: Բնական է Հայ Եկեղեցին մէկ պսակ կ'ընդունի եւ բազմակնութիւնը չ'արտօներ: Այս երկու օրինական կիները եւ իրենց միակ ամուսինը՝ կը դիմեն Պէրթուրի Առաջնորդարանը դատաստանուելու:

Իրենց Առաջնորդարան եկած ատեննին մարաշցի Տ. Յակոբն ալ հոն կ'ըլլայ: Այս երկու կիներէն առաջին ամուսնացողը՝ գաւառացիի տարագով, քիչ մը ոչ-նրբացած, տգեղ մէկը կ'ըլլայ, իսկ երկրորդը՝ աւելի ներկայանալի ու գեղեցիկ, առաջին կնկան հետ բաղդատուելով:

Հիմա երկու կիները քով քովի կեցած են եւ դիմացն ալ իրենց միակ ամուսինը. Տէր Յակոբ քահանան խօսքը ուղղելով միակ ամուսնին կ'ըսէ.

- Տղա՛ս, մեր եկեղեցին պսակի վրայ ուրիշ պսակ չ'ընդունիր, բայց գէշ օրերու մէջ այսպիսի բան մը ակամայ պատահած է: Ասոր մէջ դուն յանցաւոր չես, ժամանակն ու պայմաններն են յանցաւորը, բայց կրնաս նպաստել այս թնճուկի լուծման. ըսէ նայիմ, որ կինդ կ'ընդունիս եւ անոր հետ կենակցիլ կ'ուզես, առաջինի՞ն հետ թէ՞ երկրորդին...:

Խեղճ մարդը հիմա ի՞նչ ըսէր, երկուքն ալ իր պսակեալ կիներն էին: Մէկ մը կը նայի գաւառացի կնկան, իր խեղճ ու կրակ վիճակին մէջ, մէկ մըն ալ երկրորդ կնոջ, որ աւելի վայելուչ էր դէմքով, մարմնով եւ հագուստով. այս երկընտրանքին մէջ ի վերջոյ՝ իր նախընտրութիւնը կ'իյնայ երկրորդ կնկան ու ձեռքի մատնանշումով մը ցոյց կուտայ Տէր Հօր, որ վերջինին հետ կ'ուզես կենակցիլ...:

Այս մատնանշումէն դժգոհ՝ Տէր Յակոբը իր ծանօթ պարզամտութեամբ կը գոչէ.

- Օղոյ, անիկա ես այ կ'առնեմ, մարիֆէթը միւսը առնելն է: Եկու՛ր Հայ Քրիստոնէի բարի հոգիով մը՝ միւսը առ. ասիկա անտէր չի մնար, մի վախնար. բայց մեղք կ'ըլլայ միւսին...»:

Որքան էլ նկարագրուող իրադարձութիւնները ծանր լինէին, եւ ստեղծուած իրավիճակը՝ անելանելի, հենց այս առաջադրուած «ելքն» էլ զուարճապատումում դառնում է անսպասելի ծիծաղի աղբիւրը:

Ազգագրագէտ Սերիւն Աւագեանն Արձակ Գաւառին նուիրուած իր աշխատութեան մէջ 1896 եւ 1915 թուականների ցեղասպանութիւններին առնչուող յուշապատումային նիւթեր է օգտագործել՝ համեմուած արձակցի զուարճախօս եղբայրների սրամտութիւններով ու «սգերգային» նմանակումներով.

«1896ի կոտորածին լրիւ որբացած, լրիւ թալանուած, սակայն արդէն տնտեսութիւնները վերականգնուած եղբայրներին, որոնցից մէկը մի պարզ գեղջուկ է, միւսը՝ վարագի որբանոցն աւարտած գիւղական ուսուցիչ, եւ սակայն իրենց ախտում ունէին տասը անասուն, զարմանք է պատճառում, որ շահբաղցու ախտում կայ ընդամէնը մի կով, մի հորթ ու մի գետնատարած էջ ...»:

...Վշտակցի տխուր տեսք ընդունելով, նրանք բռնում են իշատիրոջ թելերից,– Կյազպար աղա, ըտըսկընա մի՛ անէ, խոկյատաոց կ'անես, մեղք ի,– ասում է աւագ եղբայրը, իսկ փոքրը լրացնում է,– Տիւ խաց խալալ ասա, մենք էլ մեր խուկիւ խամար շարական ասենք:

Պայգում են հրաշալի ձայն ունեցող երիտասարդները՝ գետնատարած էջի գլխավերեւն ու ոտնատակը, մէկը բռնում է էջի պոչը, միւսը՝ ականջը եւ սկսում են փոխ առ փոխ երգել՝ Գովկասից Արձակ հասած «Սատկած Իշու» մասին, երգիծական ողբը՝ պրիստաւ, գուրերնատոր, մալական եւ այլ խօսքերը փոխարինելով վանի մեծահարուստների ազգանուամբ ու աւելի ճոխացնելով կատակերգը.

- Ջիդաչուն փալթոյացու լայէդ սեւ կաշուտ մեռնեմ, իշօ ջան, չոշօ ջան.

Շահբաղու ոէս խատներ, տիւ չմեռնիր, չոշօ ջան...

- Թիւթունջու տան լայեղ՝ չայի կտել ակընջներացըտ մեռնեմ,
իշօ ջան, չոշօ ջան.

Շահբադու տիրացուն խատներ, տիւ չմեռնիր, չոշօ ջան...»

Եւ այսպէս շարունակում է տեղայնացուած ծաղրերգը, մինչեւ
էշը հոգին փչում է, ինչից յետոյ միայն շահբադցի գինեգործը
սթափուելով՝ ասում է.

*«- Առճակցիք,... ասպար ծէ ըտըսկնա ուրախ պախի, էսա
կարաս իմ տան խամար եմ պախէ, տիւք էլ էսա կարսի կյինուց
խմէք, գյնա կ'ասեմ՝ ասպած ծէ հյա ըտըսկնա պախի:*

*Աստուած Ֆրանգուլեան եղբայրներին՝ ուրախ՝ պահեց
նրանով, որ յղեց թուրքական բանակ՝ անվերադարձ... Իսկ երեքը՝
մեծ եղբոր, մէկը՝ փոքր եղբոր մանկիկները, իրենց ջահել մայրերի
էւ պառաւ տատի հետ... հալուեցին 15ի Եղեռնին, այնպէս որ
Ֆրանգուլեան Սարգսի տոհմը մոռացուեց»⁷:*

Ի տարբերութիւն յետեղեռնեան՝ մինչեւ 1960ականները
ստեղծուած գուարճապատումների՝ 1960ականներից յետոյ
շրջանառուող նիւթերը հիմնականում երգիծական կարճաոտ
խտացումներ են՝ գուարճախօսութիւններ, մի մասն էլ՝
երկխօսական գուարճալիքներ: Դրանց մէջ Հայոց
Յեղասպանութիւնը ներկայացում է տարբեր դրսեւորումներով.-

Ա. Խորհրդային տարիներին լռեցրած ցաւի պոռթկում եւ պահանջատիրութիւն

1965 Ապրիլի 24ին բողոքի եւ պահանջատիրութեան ցոյցերն
ընդգրկեցին ողջ Խորհրդային Հայաստանը: Դերասան, բեմադրիչ
Գրիգոր Չալիկեանը սեւակեան իր յուշապատումում Երեւանում
տեղի ունեցած փոթորկալից այդ օրերի մասին ահա թէ ինչ է
գրում. *«Աշխարհասփիւռ հայ մարդը գրկաբաց-սրտաբաց
ընդունեց «Ձանգակատունը»: Նրա դողանջները շուտով իրենց
արձագանգն ունեցան եղեռնի 50ամեակի պոռթկման օրերին,
որպէս զարթօնքի կոչ: Ժողովուրդը յորդեց, ծովացաւ
կենտրոնական հրապարակում, ակեկոծուեց՝ 'հողէ ըր, հողէ ըր'
մոնչալով: Հրշէջ մեքենաները ջրախեղդ էին անում ամբոխին...»⁸:*

Ազգային ցաւի ժայթքումը ջրի շիթերով լռեցնելու՝
կառավարութեան ձեռնարկած այդ քայլը արձանագրուեց նաեւ
գուարճախօսութիւնների մէջ.

1965 թուականի Ապրիլի 24ին՝ եղեռնի 50ամեակի օրը ժողովուրդը հրաբխի պէս պոռթկաց ու ժայթքեց՝ լցուելով հրապարակ, այնուհետև՝ օպերայի մօտ՝ վանկարկելով.

- Հո-դե՛ -րը, հո-դե՛ -րը...

Ու յանկարծ յայտնուում են հրշեջ մեքենաներն ու ջրի շիթերով փորձում ցրել ժողովրդին:

Ժողովուրդ, - գոռում է ինչ-որ մէկը՝ խառնուած ամբոխի միջից, - ջուրը տուին, մնացին հողերը...

Այդ օրերին ժողովրդի մէջ սկսեց շրջանառուել «Մենք հող ենք ուզում, սրանք՝ ջուր են տալիս» աննկղոտային արտայայտութիւնը...⁹:

Հողերի պահանջատիրութիւնը արտայայտուած է նաև Լոռիում գրանցուած պատումներից մէկում, որտեղ անսպասելի ծիծաղը դրսևւորում է միամիտ ու այդ պոռթկումներին անտեղեակ ու անհաղորդ լռեցի գուարճախօսի պատասխանի միջոցով.

«1965 թուականին Եղեռնի 50ամեակի ցոյցերի ժամանակ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) հրապարակում հաւաքուած ժողովուրդը վանկարկում էր.

- Հո-դե՛ -րը, հո-դե՛ -րը, հո՛-դենք ու-զում, հո՛-դենք ու-զում...

Յուցարարներից մէկը, տեսնելով լռեցի Ռուբէնին, հարցընում ա.

- Ռուբէ՛ն դայի, դու էլ ե՞ս հողերն ուզում:

Ասում ա.

- Ձէ, բալա՛ ջան, ինձ մի աւտօ աւազ ա պէտկը...» (ԱՄՇՀ):

Բ. Հայկական ծինի յանրժութեան ու ծլարձակման վկայութիւններ

Սարոյեանն իր «Հայր Եւ Հայր» պատմուածքում այսպիսի պոռթկումով է հիմնաւորում դա. «Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը... Փորձէք կործանել այս ցեղը, ասացէք՝ դարձեալ 1915, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնուած: Կործանեցէք Հայաստանը, տեսէք՝ կը կարողանա՞ք: Իրենց տներից քշեցէք անապատ, մի՛ մոռացէք ձեռքներից խլել ճամպի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի տուէք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսէք՝ նրանք դարձեալ պիտի չապրեն՞: Տեսէք՝ ցեղը դարձեալ պիտի չյառնի՞, երբ նրանցից

երկուսը քսան տարի յետոյ հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզուով...»¹⁰:

Անեկդոտներում դա ապացուցում է մտքի թռիչքներից մեկի՝ շախմատի հայ երիտասարդների աներեւակայելի յաջողութիւնների ենթախորքում.

«Ձորջ Բուշը իր մօտ է կանչում երկրորդ տեղը գրաւած ԱՄՆի շախմատի ողիմպիական հաւաքականի անդամներին եւ ասում.

- Էդ ու՛մ էք պարտուել:

Ասում են՝ հայերին:

- Ի՛նչ հայ, բոլոր հայերին 1915 թուին չկոտորեցի՞ն:

- Բանից պարզում է՝ 6 հոգի մնացել էր...» (ԱՄՇՀ)¹¹:

Գ. Թուրքին անընդհատ հետապնդող հայկական հարցը Աստծոյ օգնութեամբ վերջնականապէս «լուծել» փորձելը

«Թուրքերը Աստծուն են դիմում, թէ՛

- Տէ՛ր Աստուած, Հայաստանում մի լաւ երկրաշարժ արա, որ էս հայերից էլ պրծնենք, հայկական հարցից էլ:

Յաջորդ օրը Վանի երկրաշարժն է լինում: Խառնուած թուրքերը նորից են Աստծուն դիմում, թէ՛

- Աստուա՛ ճ ջան, ախր քեզ խնդրեցինք, ասինք՝ երկրաշարժը Հայաստանու՛մ արա, էս ի՞նչ օյին բերիք մեր գլխին:

Աստուածն ասում է.

- Բայց էս ի՞նչ մեղաւոր եմ. երեւի ձեռքիս քարտէզը հին Հայաստանինն է եղել...» (ԱՄՇՀ):

Տարբերակ՝ «Ես ի՞նչ մեղաւոր եմ. Հայաստան ասելիս էս տարածքն եմ հասկանում» (ԱՄՇՀ):

Դ. 1988ականների միտինգների «գործողութիւն».

Խորհրդային տարիների արգելուած թեմաները 1980-ականների վերջին կտրել էին բռնատիրութեան կապանքները: Ղարաբաղեան Շարժման շնորհիւ հայոց ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան վերաբերեալ կորցրած յիշողութիւնն էր վերականգնուել.

«Ղարաբաղեան շարժման ամենալարուած օրերին մէկը միտինգից յետոյ տաքսի ա կանգնացնում, նստում ու ասում ա.

- Քշի Թուրքիա:

- Ո՛ւր...

- Ասի՛ թուրքիա:
- Թուրքիա՞ ինչ գործ ունես, ա՛յ ախպեր:
- Թուրքերը հայերին կոտորել են:
- Հա, բայց դա տասներհինգ թուին ա եղել:
- Ես հենց նոր իմացայ. քչի՛ թուրքիա...» (ԱՍՇՀ):

Ե. Եղեռնի հետեւանքով մարդկային կորուստների առկայութեան պայմաններում նիւթական արժէքի անխաթար վիճակը «բախտաւորութիւն» համարելը՝ զաւեշտի աղբիւր

«Գաղթից նոր էին վերադարձել: Մաթոսենց գերդաստանից ոչ ոք կենդանի չէր մնացել: Հարեւան Զարուհին հիացմունքով նայեց Մաթոսենց տներին ու ասաց.

- Բախտաւոր Մաթոս փաշա, ի՛նչ դրրդ ունիս, տներդ դուռուլի (կանգուն) մնացել են»¹²:

Դ. Գաղթականների դիմագրաւած բարբառային եւ լեզուական դժուարութիւնները

Ինչպէս օտարութեան մէջ յայտնուած ամէն մարդ, այնպէս էլ ցեղասպանութեան հետեւանքով աշխարհով մէկ սփռուած հայ գաղթականը մինչեւ լեզուական խոչընդոտները յաղթահարելը, բարբառախօս հայրենակիցների եւ օտարագրիների հետ շփուելիս յաճախ է զաւեշտալի իրավիճակների մէջ յայտնուում՝ առիթ հանդիսանալով բազում երգիծական մանրապատումների ստեղծման.

Արցախցին ասում է՝ «Եր կըրցէք, քինանք մեր տոն, մխրէ գիլեջա [մի քիչ գրոյց] անենք...» խօսքին վանեցին պատասխանում է. «Վախտ կ'երթա: Պա գիլեջան խո՛րի, ինչի՞ չիք պիրէ՛ անենք...»: (գիլեջա անելը վանեցի գաղթականները ընկալել են «ինչ-որ աշխատանք անել»)՝¹³:

Ամերիկա գաղթած այնթապցու՝ *I want a knife* (դանակ մը կ'ուզեմ)ի փոխարէն արտաբերած *I want a wife* (կնիկ մը կ'ուզեմ) արտայայտութիւնն էլ դարձել է գուարճապատումի անսպասելի ծիծաղ յարուցող միջոցը¹⁴:

Ե. Թուրքերի եւ նրանց աջակցող քրդերի հանդէպ հայի ունեցած վերաբերմունքն ու մտածողութիւնը

«Թուրքք, Քիւրտք եւ Սասունցիին կը կանչուին Աստուծոյ քով: Աստուած կը հարցնէ.

- Ի՞նչ կը փափաքիս աշխարհիս վրայ:

Քիւրտք կը պատասխանէ.

- Թուրք չմնայ աշխարհիս վրայ:

Թուրքին կը հարցնէ, թուրքն ալ կ'ըսէ.

- Քիւրտ չմնայ աշխարհիս վրայ:

- Դուն ի՞նչ կը փափաքիս,- կը հարցնէ Աստուած սասունցիին:

- Ես բան մը խնդրած չունիմ, դրացիներուս փափաքը կատարէ միայն,- կը պատասխանէ Սասունցին»¹⁵:

Զ. Յեղասպանութիւնը թուրքին՝ մղձաւանջ

Որքան էլ թուրքը փորձեր անի մարդկութիւնից թաքցնել իր յանցանքը, միեւնոյնն է, Յեղասպանութիւնն անտես մի գործիքով ծակծկելու է նրա ուղեղը. նրա մտածողութիւնից հնարաւոր չէ հեռացնել անընդհատ հետապնդող «ներքին եւ արտաքին» թշնամուն.

«Մի թուրքի պարտիայի [համայնավար կուսակցութեան] շարքերն են ընդունում, հարցնում են.

- Ովքե՞ր են մեր թշնամիները:

- Հայերը:

- Դրանք մեր ներքին թշնամիներն են, արտաքինի մասին եւմ հարցնում:

- Արտասահմանի հայերը,- պատասխանում է թուրքը»¹⁶:

Է. Թրքախօսութիւն

ԺԹ. դարի երկրորդ կեսի եւ Ի. դարի անեկդոտների ժողովածուներում թրքախօսութեան նիւթով բազմաթիւ գուարճախօսութիւններ են տպագրուել: Դրանց մի մասն էլ առնչում է Յեղասպանութեանը, որտեղ թրքախօսութիւնը ներկայացում է իբր «փրկութեան» ելք, որին կուրօրէն հաւատացել են նաեւ հայ մեծամեծները:

«1915ին տեղահանութեան հրաման կու գայ Այնթապ: Վալիին կը կանչէ Այնթապի մեծամեծները ու կը հաղորդէ, թէ բոլոր հայերը պէտք է այսինչ թուականին պարպեն քաղաքը ու երթան:

Այնթապի մեծամեծները կը պատասխանեն.

- Էֆենտի՛, մեզի համար բան մը չկայ, պիզիմ հափըմըզըն անա լիսանը թուրքչա: (Մեր բուրդին մայրենի լեզուն թրքերէն է)»¹⁷:

Կամ մէկ ուրիշը.

«Տարագրութենէն վերջ Հալէպ հաւաքուած գաղթականները Պատարագի եւ ժամերգութեան համար այնթապցիներու Ս. Աստուածածին եկեղեցին կ'երթային: Քահանան այլեւս հայերէն քարոզ կը կարդար:

Այնթապցի Մարաշցիին կ'ըսէ.

- Պու դարիպլար վար եա... Սաֆարպիրըկըն կէօզը քէօր օլըն: Պու դարիպլար կելտիլար պիզիմ անա լիսանըմըզը հարապ էթտիլար: Օնըն կարընտա էրմանճա քարոզ վէրէօր պիզիմ քահանայ: (Այս պանդուխտները կը տեսնե՞ս... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր քահանան հայերէն քարոզ կու տայ)»¹⁸:

«Կիլիկիոյ պարպումէն ետքը, երբ Կիլիկիոյ ժողովուրդը Պէյրութ էկաւ, աստանացիները արապաճիներ էին. մէկ բառ հայերէն չգիտէին, բայց ամէն մէկը, մէջքը դանակ մը խրած, դաշնակցական կոմիտէի ժողովի կ'երթային:

Ժողովի ժամանակ շրջաբերականը կը կարդացուի հայերէն: Անշուշտ, աս աստանացիները բան չեն հասկնար: Մէկը միւսին կ'ըսէ.

- Նէ՞ դեդի, դէօյիւշ վա ը: (Ի՞նչ է ասում՝ կոխի կայ)՞:

- Եոք (ո՛չ):

- Հադէ՛, հէ՛յ վալլա (դէ՛, փա՛ոք Աստոյ): Քանի որ կոխի չիկայ, մենք հոս տեղը ի՞նչ գործ ունինք: Մենք գացինք, դուք հայերէնը կարդացէք»¹⁹:

Ը. Քրիստոնէական բարոյախօսութեան անգորութիւնը թուրքին դէմ

Բազմաթիւ երգիծական մանրապատումներ կան՝ կապուած հոգեւորականների կողմից հայիոյանքի ճարահատ կիրառութիւնների հետ: Դրանք առաւել ընդգծուած դրսեւորում են ստանում յատկապէս թուրքերի սանձարձակութիւնների ու կոտորածների ժամանակ: Նման պարագաներում ամէն մի քրիստոնէական բարոյախօսութիւն անգոր է դառնում հակազդել

մարդու դիմակ հագած գազանին, եւ հետեւում է եզրակացութիւնը. թուրքին դիմագրաւելու միակ ելքը հենց իր՝ թուրքի լեզուով խօսելն է: «Տէր Գեորգ Պապայի «Քաջագործութիւն»ներէն» մանրապատումում երբ փորձում են հայհոյելու համար դիտողութիւն անել քահանային, թէ՛ «մենք եկեղեցիի պաշտօնեաներ ենք, կը վայելէ՞ր այդ լեզուագարութիւնը», հետեւում է կտրուկ եւ ուղղորդող պատասխանը.

- Պատուելի՛.... դուն Ս. Գրքի լեզուով խօսեցար եւ տեսար թէ՛ ի՛նչ ընդունելութիւն գտանք. այդ անիծեալներուն պէտք էր խօսիլ իրենց հասկցած լեզուով, իթինքի տէնէկ...»²⁰:

Այրուած սրտից դուրս ժայթքած զայրոյթն է արտացոլուած նաեւ «Հաւատացեալ Մամիկին Բողոքը» մանրապատումում, ուր ներկայացում է եղեռնից մագապուրծ աստուածապաշտ մամիկին, որը «...եաշմախին ծնօտի մասը քիթէն վեր, ճակատի մասը արտեւանունքներէն վար պահեց՝ մինչեւ իր մահը: Երբ կին մը տեսնէր աչքերը ծարիր, երեսը ներկուած, բերանը բաց, «մեղա յ, մեղա յ» ըսելով իր լաչակը անգամ մըն ալ կ'ամրացնէր քթին վրան, եւ կ'աղօթէր...:

Մեր սեւ օրերուն անիկա ալ խառնուեցաւ տարագրութեան կարաւանին եւ անօթի ծարաւ հասաւ Մասնի անապատները եւ հոն ծախեց ծարեց՝ գոր ինչ ունէր եւ պատերու տակ մնաց տկլոգ եւ դեռ կ'աղօթէր...:

...Ամէն օր, արեւու քիթով անիկա կը շտկուէր դիակներու մէջէն, կ'իյնար սար ու ձոր, խոտ կը փնտռէր...: Խոտ գտնելն ալ շնորհ մըն էր այդ օրերուն, բայց 'հա ց, հա ց' ճուացող փոքրիկները ամէն օր խաշած խոտով խաբելն ալ դիրին գործ չէր...»²¹:

Հաւատացեալ մամիկի ըմբոստութիւնն այս անգամ ուղղուում է այդ անմարդկային տառապանքների ականատես Աստծուն. «Վերջապէս արցունքով թրջուած իր եաշմախը վեր առաւ, բերանը բացաւ, պտղուց մը խոտ մատներուն մէջ, աչքերը երկինք տնկած՝ խաշուած խոտը վեր նետեց եւ ըսաւ.

- Ա՛ն, Աստուա՛ծ, կ'ուտուի նէ պատատ մըն ալ դուն կ'է՛ր...»²²:

Թ. Հաւատքի ուժը

Մէկ այլ ժողովրդական երգիծապատումում թուրքերի անօրինութիւնների դէմ քաջարի զէյթունցիներն են դուրս գալիս եւ

թշնամու բանակում ահ ու սարսափ եւ խուճապ տարածում:
Զարմացած անօրէնները փորձում են այդ գաղտնիքը բացայայտել:

«Զէյթունցիները շատ քաջ մարդեր էին: Անոնք երբ միշտ կռիւի կ'երթային թուրքերուն դէմը, կ'աղօթէին, օգնութեան կը կանչէին իրենց Սուրբ Փրկիչին, կ'ըսէին:

- Եա՛, Սույփ Փյկիչ, - ու կը յաղթէին:

Թուրքերն ալ կը զարմանային, կ'ըսէին.- Ադ գեաւուրները 'սիւփիւրկէ' կ'ըսեն, կը սկսին կռուիլ ու կը յաղթեն:

«Միւփիւրկէ» թուրքերէն կը նշանակէ աւել: Աւելը ի՞նչպէս անոնց կ'օգնէ»²³:

Այսպիսով, եթէ մինչեւ 1960ականները ցեղասպանութեան թեմայով հրատարակուած երգիծական մանրապատումները ծաւալուն սիւժետային կառուցուածք ունէին, ժողովրդական յուշապատում-գրոյցների տեսքով էին հանդէս գալիս, եւ միայն յանկարծակի վերջաբանային աւարտն էր յիշեցնում նրանց տեսակային յատկանիշը, ապա 60ականներից յետոյ կատարած գրառումները ցոյց են տալիս, որ դրանք առաւելապէս սեղմ ու երկխօսական բնոյթի են՝ արծարծած թեմայի որեւէ բնորոշ դրուագի մատնանշմամբ, ինչը հաստատում են Սվազեանի, Չոլաքեանի, Ա. Սարգսեանի եւ այլոց գրանցած նմուշները:

Մի հետաքրքիր հանգամանք էւս. մեր ձեռքի տակ եղած Ցեղասպանութեանն առնչուող նիւթերում գրեթէ բացակայում են երգիծական մանրապատումների եւ զուարճախօսութիւնների գերակշռող մասին բնորոշ պատկերաւորման տարատեսակ միջոցներով (ժողովրդական դարձուածք, բառազեղչում, բառամիացում-բառաբաժանում եւն.) ու հնչիւնական եւ հնչերանգային զանազան ձեւերով ու ոճական հնարանքներով (ձայնեղների իւլացում ու խուլերի ձայնեղացում, երգեցիկ ոճ, բարձր եւ ցածր, երկարացման հնչերանգ եւն.) անսպասելի ծիծաղ առաջացնելու դրսեւորումները: Ինչպէս վերը բերուած օրինակներում տեսանք, դրանք իրագործում են հիմնականում գործողութիւններից բխող կտրուկ եւ անակնկալ ծիծաղ յարուցող խօսքի օգնութեամբ:

Հայոց Մեծ եղեռնին առնչուող հայ ժողովրդական երգիծապատում-զուարճախօսութիւնները բանահիւտութեան միւս սեռերից առանձնանում են ոչ միայն իրենց տեսակային

առանձնայատկություններով, այլև Ցեղասպանությունը հաւաստող պատմա-վաւերագրական նիւթի մատուցման իւրայատկութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Այս երկու եզրերը տարանջատել ենք՝ զուարճապատումի համար հիմք ընդունելով նրա սիւժետային՝ պատումային յատկանիշը, զուարճախօսութեան համար՝ անսիւժե՝ անպատում, նաեւ՝ երկխօսական բնոյթը:
- ² Վերժինէ Սվազլեան, *Հայոց Ցեղասպանություն. Ականատես Վերապրողների Վկայություններ*, Երկրորդ համալրուած հրատարակություն, Երեւան, ՀՀ ԳԱԱ, Գիտություն Հրատ., 2011:
- ³ Վերժինէ Սվազլեան, *Մուսա Լեռ, Հայ Ազգագրություն Եւ Բանահիւսություն, Հատոր 16*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1984. նաեւ՝ Սվազլեան, *Գիլիկիա. Արեւմտահայոց Բանաւոր Աւանդությունը*, Երեւան, ՀՀԳԱԱ Հրատ., 1994, նաեւ՝ Սվազլեան, *Պոլսահայ Բանահիւսությունը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ, Գիտություն Հրատ., 2000:
- ⁴ *Մարաշ*, Երկասիրեց Գր. Հ. Գալուստեան, Հրատարակություն Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդր. Վարչություն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934, վերահրատարակուած՝ 1988. նաեւ՝ *Պատմություն Անթէպի Հայոց, Գ Հատոր*, խմբագիր Երուանդ Պապայեան, Լոս Անջելըս, 1944. նաեւ՝ *Հայկական Ջրոյցներ. Առակներ, Առածներ, Մանրավէպեր, Ջուարճալի Ասացուածքներ Եւ Իմաստուն Խօսքեր*, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆայեան, Լոս Անճելըս, Պոզաճեան Տպ., 1944, վերահրատարակությունը՝ *Գիրք Առակաց, Լիբանան, Պէրոյթ, Տպ. Տօնիկեան*, 1957. նաեւ Ազնաւուրեան, *Հէքիաթներ, Ջուարճալիքներ*, Միչիկըն-Պէրոյթ, Տպ. Տօնիկեան 1971. նաեւ *Միջ-Գաւառական Անէքթոններ*, հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Զոլաքեան, Հալէպ, 1988 եւ.:
- ⁵ Սարգիս Բախտիկեան, *Շեփկայ Խելացին (Հայկական Ջուարճախօսություններ)*, Պէրոյթ, Տպ. Օլիմպիք, 1953, էջ 24:
- ⁶ Գալֆայեան, *Գիրք Առակաց*, էջ 156-157:
- ⁷ Մերինէ Աւագեան, *Վանի Նահանգ, Գ. Արճակ, Հայ Ազգագրություն Եւ Բանահիւսություն, Հատոր 8*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1978, էջ 128-129:
- ⁸ Գրիգոր Զալիկեան, *Անլրելի Միրահարը*, Երեւան, ՀԳՄ Հրատ., 2004, էջ 64-65:
- ⁹ Արմէն Սարգսեանի անձնական հաւաքածու (ԱՍՇՀ):
- ¹⁰ Վիլիամ Սարոյեան, *Պատմուածքներ, Հարցազրոյցներ, Էսսէներ, Նամակներ, Յուշեր*, Երևան, Նաիրի Հրատ., 2010, էջ 153-154:
- ¹¹ Ջուարճախօսութեան գրառումը կատարուել է Հայաստանի շախմատի հաւաքականի՝ 2006ին աշխարհի ախոյեան դառնալուց մէկ շաբաթ անց, իսկ տարբերակը՝ 2 ամիս անց:
- ¹² Հմայեակ Գրիգորեան, *Սրամտում է Ջաւախքը: Անէկդոտներ*, Երեւան, Նաիրի Հրատ., 1992, էջ 60:
- ¹³ Բենիկ Ղուկեան, *Գիլիստան. Պատարիկներ Սօտիկ Անցեալից*, Երեւան, Զանգակ-97, 2004, էջ 44:
- ¹⁴ *Պատմություն Անթէպի Հայոց*, էջ 380:

-
- ¹⁵ *Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 103:
- ¹⁶ *Պատմում Եւ Գատակում Էր Գալուստ Գալստեանը*, հաւաք. եւ կազմ. Լենա Անթառանեան, Երեւան, Վերնատուն Հրատ., 1994, էջ 59:
- ¹⁷ *Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 86:
- ¹⁸ Նոյն, էջ 86:
- ¹⁹ Սվազլեան, *Կիլիկիա*, էջ 110:
- ²⁰ *Պատմութիւն Անթէպի Հայոց*, էջ 377-378:
- ²¹ Գալֆայեան, *Գիրք Առակաց*, էջ 150-151:
- ²² Նոյն:
- ²³ Սվազլեան, *Կիլիկիա*, էջ 107: Այս պատումի առաջին մասը վիպերգային կառուցուածք ունի. եթէ «Կարոս Խաչ» վիպերգում թշնամու դէմ կռուելիս հայերին օգնում է Նեխուրի (Քարաուզի) դաշտում յայտնուած խաչը, *Սասնայ Օռերում՝* Խաչպատարագին, ապա այս զուարճապատումում զէթունցիներին օգնութեան է հասնում Սուրբ Փրկիչը, որի բարբառային «Սույվի Փյկիչ» եւ թուրքերէն «սիւփիւրկէ» արտաբերումների համադրումը մանրապատումում դառնում է զաւեշտի մէխը:
- Ի դէպ, զէթունցիների այս ինքնատիպ զուարճապատումի մէկ այլ տարբերակ Հալէպում գրառել եւ հրատարակել է նաեւ հայագետ Յակոբ Զոլաքեանը (*Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 55):

ARMENIAN POPULAR COMIC ANECDOTES AS
REFLECTIONS OF GENOCIDE ACCOUNTS
(SUMMARY)

ARMEN SH. SARKSYAN

In the aftermath of the Genocide a survivor, losing hope of finding his wife, marries a widow. The first wife, however, reappears. As polygamy is forbidden by the Armenian Apostolic Church, a priest calls the three and asks the husband to choose between his two legitimate wives. The husband chooses his good-looking new wife. The priest, concerned with the fate of the poor, miserable old wife, comments on the decision: "I would have married your good-looking wife. The problem is what happens to your old wife." Eventually he suggests that the husband select the old wife.

The author highlights a number of such comic anecdotes and humorous situations that happened during the Armenian Genocide, were caused by it, happened in its aftermath or are related to the Genocide.

The author categorises these anecdotes according to the circumstances and notes that these go far beyond reflecting the genocide per se. Rather, they are meant to reinvigorate Armenian spirit and pride.